# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
# ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՍԱՂՄՈՍԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
Հեռ. 093.27.93.57

13. 01. 2020 թ.

ՀՀ Արագածոտնի մարզպետ՝
Պարոն՝ Դ. Գևորգյանին

Ձեզ ենք ներկայացնում Սաղմոսավան համայնքի ավագանու 2020թ-ի հունվարի 13-ի թիվ 1 արձանագրության 1,2,3,4,5,6,7,8,9,10,11,12,13,14 որոշումները, իրենց կից հավելվածներով:

Սաղմոսավան համայնքի ղեկավար՝ Գ.Ն.ԱՎԱԳՅԱՆ

Ելք
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժին
21 01 2020
Մուտք № 00417-20

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի

Սաղմոսավան համայնք, , 094-52-03-01,

## ՈՐՈՇՈՒՄ

<<13>> Հունվարի 2020 թվական N 1-Ն

## ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի

***Սաղմոսավան համայնքի ավագանին հաստատում է 13.01.2020թ-ի ավագանու նիստի օրակարգը.***

Ավագանու անդամներ *Կողմ (4)* *Դեմ(_0_)* *Ձեռնպահ(_0_).*

1.Լաուրա Միքայելյան

2.Մկրտիչ Թադևոսյան

3.Սլավիկ Սլոյան

4.Տաթևիկ Ավագյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /Գ. ԱՎԱԳՅԱՆ/

13 Հունվարի 2020թ.

Գ. Սաղմոսավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

13 հունվարի 2020թ. **N2**

ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով

**Սաղմոսավան համայնքի ավագանին որոշում է՝**

Հաստատել Սաղմոսավան համայնքի 2020 թվականի բյուջեն

**Կողմ-4** **Դեմ-0** **Ձեռնպահ-0**

Լ.Միքայելյան
Տ. Ավագյան
Մ.Թադևոսյան
Ս.Սլոյան

ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՔՆԻ
ՂԵԿԱՎԱՐ Գ. Ն. Ավագյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ N3

13 հունվար 2020թ.

## ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով Սաղմոսավան համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել համայնքի տարածքում 2020թ. տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն հավելված N1, N2:

Կողմ-4 Դեմ-0 Ձեռնպահ-0

Լ.Միքայելյան
Տ.Ավագյան
Մ.Թադևոսյան
Ս. Սլոյան

ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐ Գ.Ն. Ավագյան

Հավելված1
ՀՀ Արագածոտնի մարզի Սաղմոսավան
գյուղական համայնքի ավագանու
13 Հունվար 2020թ. N3 որոշման

## ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019թ, ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների(ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

**հիմնական օբյեկտների համար՝**

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական(ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 25.000 դրամ.

բ. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 30.000 դրամ.

**ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝**

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 5000 դրամ.

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է մինչև 25000 դրամ:

3. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում մինչև 2500 դրամ.

բ. 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում մինչև 3500 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա) մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում մինչև 2500 դրամ.

բ. 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում մինչև 3500 դրամ.

4. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000 դրամ:

Սաղմոսավան համայնքի ղեկավար՝ Գ. Ն.Ավագյան

Հավելված 2
Սաղմոսավան համայնքի ավագանու
13 հունվարի 2020թ. թիվ 3 որոշման

| Հ/հ | Տեղական տուրքերի տեսակները | Սահմանված դրույքաչափերը /դրամ/ |
|---|---|---|
| 1. | Սաղմոսավան համայնքում տեղական տուրքերի դրույքաչափերը | |
| 1) | Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության(տեղադրման)(բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝շինարարության թույլտվության չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ | |
| ա. | մինչև 300 քառ. մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական(ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառ. մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության, շենքերի և շինությունների համար՝ | 25.000 |
| բ. | սույն կետի 1)ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝ | |
| | 301-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 30.000 |
| | 501-ից մինչև 1000 քառ. մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 50.000 |
| | 1001-ից մինչև 3000 քառ. մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 50.000 |
| գ. | 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 5000 |
| | | |
| | | |
| | | |
| | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

13 հունվար 2020թ. N4

## ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով Սաղմոսավան համայնքի ավագանին

## ՈՐՈՇՈՒՄ Է`

Հաստատել Սաղմոսավան համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափը սահմանել 140.000(մեկ հարյուր քարասուն հազար) ՀՀ դրամ:

Կողմ-4 Դեմ-0 Ձեռնպահ-0

Լ.Միքայելյան
Տ. Ավագյան
Մ.Թադևոսյան
Ս. Սլոյան

ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. Ն. Ավագյան

ՀՀ ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

13 հունվար 2020թ. N5

## ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28 –րդ կետի պահանջներով, «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասով Սաղմոսավան համայնքի ավագանին

## ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Սաղմոսավանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն կից հավելվածի:

Կողմ-4 Դեմ-0 Ձեռնպահ-0

Լ.Միքայելյան
Տ. Ավագյան
Մ. Թաղևոսյան
Ս.Սլոյան

Սաղմոսավան համայնքի ղեկավար Գ.Ն.Ավագյան

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզի Սաղմոսավան
համայնքի ավագանու

13 հունվար 2020թ. N 5 որոշման

# ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 7
Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ 5

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնային դրույքաչափ |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 140.00 |
| ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| Աշխատակազմի քարտուղար1.2.1 | 1 | 107.00 |
| Առաջատար մասնագետ 3.1-1 | 1 | 96.000 |
| Առաջատար մասնագետ 3.1-2 | 1 | 96.000 |
| Առաջատար մասնագետ 3.1-3 | 1 | 96.000 |
| Անասնաբույժ (ինքնաֆինասավորում) /պայմանագրային/ | – | 10.000 |
| Ավտոկանգառի աշխատակից /պայմանագրային/ | – | 20.000 |
| Ընդամենը ամսեկան | 5 | 565.00 |

Սաղմոսավան համայնքի ղեկավար՝ Գ.Ն.Ավագյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի

Սաղմոսավան համայնք, 094-52-03-01,

## ՈՐՈՇՈՒՄ

<<13>> Հունվարի 2020 թվական N 6-Ն

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ կետով Սաղմոսավան համայնքի ավագանին

*ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1.Սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծել համաձայն համայնքի ավագանու սահմանված չափորոշիչների՝

1. Սոցիալապես և տնտեսապես անապահով ընտանիքներին- 20000 ՀՀ դրամ

2. Միայնակ թոշակառուներին- 15000 ՀՀ դրամ

3. Բազմազավակ / 4 և ավելի երեխաներ ունեցող / ընտանիքներին -30000 ՀՀ դրամ

4. Ղարաբաղյան պատերազմի մասնակիցերի ընտանիքներին- 30000 ՀՀ ԴՐԱՄ

5.Ժամկետային զին ծառայության մեջ գտնվող զին ծառայողների ընտանիքներին- 20000 ՀՀ դրամ

6.Տարերային աղետից տուժած կարիքավոր ընտանիքներին՝/ մրկանման քամիներ, կարկուտներ/ կախված վնասի չափից-20000 մինչև 40000 ՀՀ դրամ

7. Հաշմանդամության կարգ ունեցող բնակիչներին՝

ա/ 1-ին կարգ ունեցող հաշմանդամներին- 20000 ՀՀ դրամ

8. Բարձրագույն կրթության ոլորտում աջակցել կարիքավոր ուսանողներին- 40000 ՀՀ դրամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Ավագանու անդամներ *Կողմ (4)* *Դեմ(_0_)* *Ձեռնպահ(_0_)*

1.Լաուրա Միքայելյան

2.Մկրտիչ Թադևոսյան

3.Սլավիկ Սլոյան

4.Տաթևիկ Ավագյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /Գ. Ավագյան/

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի

Սաղմոսավան համայնք, , 094-52-03-01,

ՈՐՈՇՈՒՄ

### <<13>> Հունվարի 2020 թվական N 7-Ն

# ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետով**

*Սաղմոսավան համայնքի ավագանին որոշում է.*

1.Հաստատել Սաղմոսավան համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը համաձայն կից հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ *Կողմ (4) Դեմ(_0_) Ձեռնպահ(_0_).*

1.Լաուրա Միքայելյան

2.Մկրտիչ Թադևոսյան

3.Սլավիկ Սլոյան

4.Տաթևիկ Ավագյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /Գ. ԱՎԱԳՅԱՆ/

13 Հունվարի 2020թ.

Գ. Սաղմոսավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի
Սաղմոսավան համայնք, հեռ. 094-52-03-01

ՈՐՈՇՈՒՄ

« 13 » Հունվարի 2020 թվականի N 8 -Ն

# ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 38-րդ կետի պահանջով

*Սաղմոսավան համայնքի ավագանին որոշում է.*

1. Հաստատել «Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը»՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանի՝ Կողմ (_4_) Դեմ (_0_) Ձեռնպահ (_0_)

1.Լաուրա Միքայելյան
2.Մկրտիչ Թադևոսյան
3.Սլավիկ Սլոյան
4.Տաթևիկ Ավագյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ / Գ. ԱՎԱԳՅԱՆ/

(Կ. Տ.)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի
Սաղմոսավան համայնք, հեռ.094-52-03-01

ՆԱԽԱԳԻԾ

# ՈՐՈՇՈՒՄ

«13» Հունվարի 2020 թվականի N 9-Ն

## ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 39-րդ կետի,

*Սաղմոսավան համայնքի ավագանին որոշում է.*

1. Հաստատել «Համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը» համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ ( 4 ) Դեմ ( 0 ) Ձեռնպահ ( 0 )

1. Լաուրա Միքայելյան
2. Մկրտիչ Թաղևոսյան
3. Սլավիկ Սլոյան
4. Տաթևիկ Ավագյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ / Գ. ԱՎԱԳՅԱՆ /

(Կ. Տ.)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի

Սաղմոսավան համայնք, , 094-52-03-01,

## ՈՐՈՇՈՒՄ

<<13>> Հունվարի 2020 թվական N 10-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՆՈՐ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 02.06.2016թ. N631-Ն որոշման հավելվածի 4-րդ գլխի 12-րդ կետով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջով

*Սաղմոսավան համայնքի ավագանին որոշում է.*

1. Հաստատել Սաղմոսավան համայնքի խնամակալության և հոգաբարձուների խորհրդի նոր կազմը

1. Լաուրա Միքայելյան- նախագահ

2.Արմեն Ավագյան- քարտուղար

3.Թերեզա Ավագյան-անդամ

4.Գոհար Շահինյան-անդամ

5.Մկրտիչ Թաղևոսյան-անդամ

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ *Կողմ ( 4 )* *Դեմ(_0_)* *Ձեռնպահ(_0_).*

1.Լաուրա Միքայելյան

2.Մկրտիչ Թաղևոսյան

3.Սլավիկ Սլոյան

4.Տաթևիկ Ավագյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /Գ. ԱՎԱԳՅԱՆ/

13 Հունվարի 2020թ.

Գ. Սաղմոսավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի

Սաղմոսավան համայնք, , 094-52-03-01,

ՈՐՈՇՈՒՄ

<<13>> Հունվարի 2020 թվական N 11-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի <<տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի, 10-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի, 14-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի <<Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարների մասին>> ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետի, 2-րդ հոդվածի 1-ին մասի, 10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջով

*Սաղմոսավան համայնքի ավագանին որոշում է.*

1.Համայնքի սեփականություն համարվող ընդհանուր օգտագործման /02-093-517-001/ ծած. 0.09քմ. հողատարածքը օգտագործել որպես ավտոկայանատեղի և հավաքագրված վճարները մուտքագրել համայնքային բյուջե:

2.Ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար 1 ավտոմենքենաի համար գանձել վճար հետևյալ դրույքաչափերով

ա. 1 ժամվա համար- 200/ երկու հարյուր/ ՀՀ դրամ

բ. 1-ից – 8 ժամ- 300/երեք հարյուր/ ՀՀ դրամ

Ավագանու անդամներ *Կողմ (4)* *Դեմ(_0_)* *Ձեռնպահ(_0_).*

1.Լաուրա Միքայելյան

2.Մկրտիչ Թադևոսյան

3.Սլավիկ Սլոյան

4.Տաթևիկ Ավագյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /Գ. ԱՎԱԳՅԱՆ/

13 Հունվարի 2020թ.

Գ. Սաղմոսավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի

Սաղմոսավան համայնք, , 094-52-03-01,

## ՈՐՈՇՈՒՄ

<<13>> Հունվարի 2020 թվական N 12-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2019Թ. ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի և <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով

***Սաղմոսավան համայնքի ավագանին որոշում է.***

1. Համայնքի ղեկավարի կողմից իրականացված բյուջեի 4-րդ եռամսյակի կատարողականը գնահատել բավարար:

Ավագանու անդամներ *Կողմ (4)* *Դեմ(_0_)* *Ձեռնպահ(_0_).*

1.Լաուրա Միքայելյան

2.Մկրտիչ Թադևոսյան

3.Սլավիկ Սլոյան

4.Տաթևիկ Ավագյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /Գ. ԱՎԱԳՅԱՆ/

13 Հունվարի 2020թ.

Գ. Սաղմոսավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի

Սաղմոսավան համայնք, , 094-52-03-01,

### ՈՐՈՇՈՒՄ

<<13>> Հունվարի 2020 թվական N 13-Ն

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԼԻԱՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջով

*Սաղմոսավան համայնքի ավագանին որոշում է.*

1. Դադարեցնել Սաղմոսավան համայնքի ավագանու անդամ Լիանա Հակոբյանի լիազորությունները;

Ավագանու անդամներ *Կողմ ( 4)* *Դեմ(_0_)* *Ձեռնպահ(_0_).*

1.Լաուրա Միքայելյան

2.Մկրտիչ Թադևոսյան

3.Սլավիկ Սլոյան

4.Տաթևիկ Ավագյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /Գ. ԱՎԱԳՅԱՆ/

13 Հունվարի 2020թ.

Գ. Սաղմոսավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի

Սաղմոսավան համայնք, , 094-52-03-01,

## ՈՐՈՇՈՒՄ

<<13>> Հունվարի 2020 թվական N 14-Ն

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ 02-093-0102-0004 ԾԱԾԿԱԳՐԻ 5.0 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ 15.06.2011 Թ. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՍՄ2460 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի ՀՀ Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289, 436 և 437 հոդվածների պահանջներով, հիմք ընդունելով վարձակալ Նաիրի Սահակյանի դիմումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նաիրի Սահակյանը հանդիսանում է բարեխիղճ վարձակալ, պատշաճ և ժամանակին կատարում է վարձակալության պայմանագրով ստանձնած պարտավորությունները որոշեցին՝

Թույլատրել Սաղմոսավան համայնքի ղեկավարին, համայնքի ղեկավար Գևորգ Ավագյանի, որպես վարձատու և քաղաքացի Նաիրի Սահակյանի, որպես վարձակալի միջև 15.06.2011թ.Անշարժ գույքի վարձակալության պայմանգրում սեղանամատյան 2460 կատարել փոփոխություն ավելացնել՝

1. Կետ 2.1.7
   Վարձակալին վերապահել հողամասի ուղղակի վաճառքով ձեռք բերման իրավունք տվյալ պահին գործող հողամասի կադաստրային արժեքով:

Ավագանու անդամներ *Կողմ (4)* *Դեմ(_0_)* *ձեռնպահ(_0_).*

1.Լաուրա Միքայելյան

2.Մկրտիչ Թադևոսյան

3.Սլավիկ Սևոյան

4.Տաթևիկ Ավագյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /Գ. ԱՎԱԳՅԱՆ/

13 Հունվարի 2020թ.Գ. Սաղմոսավան